ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Ժամանակակից աշխարհում չարորակ նորագոյացություններն ու սիրտ-անոթային հիվանդություններն առավել հաճախ հանդիպող և առավել վտանգավոր հիվանդություններն են:

ՀՀ-ում 2017-թ. դրությամբ յուրաքանչյուր 68-րդ բնակիչ ունի չարորակ նորագոյացություն: Չարորակ նորագոյացությունների ամենատարածված տեսակը կանանց մոտ կրծքագեղձի քաղցկեղն է, որի գերակշիռ մասը բաժին է ընկնում 65 տարեկանից մեծ տարիք ունեցող կանանց:

Տղամարդկանց մոտ առավել հաճախ հանդիպող ուռուցքային հիվանդություններ են շնչափողի, բրոնխների և թոքի քաղցկեղը, որոնք կրկին առավել հաճախ նկատվում են 65-ն անց տղամարդկանց շրջանում:

ՀՀ-ում մահացության դեպքերի մոտ 50 տոկոսը բաժին է ընկնում սիրտ-անոթային հիվանդություններին: Ընդսմին, տղամարդկանց մոտ այս հիվանդությունները 3-4 անգամ ավելի հաճախ են հանդիպում, քան կանանց մոտ: Դրանց առաջացման պատճառները բազմազան են. արյան մեջ խոլեստերինի բարձր մակարդակը, շաքարային դիաբետը, ավելորդ քաշը, ճարպակալումը, աղի չարաշահումը, նստակյաց կյանքը, ծխելու սովորությունը, զարկերակային բարձր ճնշումը, սեփական առողջության բավարար ուշադրություն դարձնելու կուլտուրայի բացակայությունը: Ազդում են նաև մի շարք սոցիալական պրոցեսներ՝ պատերազմներ, կյանքի ռիթմի արագացում, սթրեսածին այլազան գործոններ:

Այս հիվանդությունները աճման միտում են դրսևորում ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ամբողջ աշխարհում: ԱՀԿ-ի (Առողջապահության համաշխարհային կազմակերպության) տվյալներով՝ ամեն տարի սիրտանոթային հիվանդություններից շուրջ 16,5 միլիոն մարդ է մահանում:

Չարորակ նորագոյացությունների և սիրտանոթային հիվանդությունների ախտորոշման ու բուժման գործում մեծ դեր ունի միջուկային բժշկությունը: